ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

Ն 251 - Ա

„07„ Սեպտեմբեր 2023թ.

ք.Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի № 46-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2022 թվականի դեկտեմբերի 8-ի 369-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանի 8.2 կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2023 թվականի սեպտեմբերի 22-ին Արարատի մարզում անցկացնել շտաբային ուսումնավարժություն՝ «Հակառակորդի հարձակման դեպքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը» թեմայով:

2. Նշանակել՝

1) ուսումնավարժության ղեկավար՝ ՀՀ Արարատի մարզպետ Սեդրակ Ռազմիկի Թևոնյան.

2) ուսումնավարժության ղեկավարի տեղակալ՝ ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ Վլադիմիր Խաչատրյանին

3) ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) Արարատի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ ՄՓՎ) պետ, փ/ծ փոխգնդապետ Արսեն Ղուկասյանին:

3. Ստեղծել ուսումնավարժության ղեկավարման շտաբ հետևյալ կազմով՝

1) խաղարկման խումբ՝

ա) խմբի ղեկավար՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ բնակչության պաշտպանության (այսուհետ՝ ԲՊ) բաժնի ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Գևորգ Թեմուրյան.

բ) խմբի անդամներ՝

ա. ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ ԲՊ բաժնի ավագ մասնագետ Հարություն Կարապետյան.

բ. ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ Վեդու հրշեջ-փրկարարական ջոկատի (այսուհետ՝ ՀՓՋ) հրամանատարի պարտականությունները ժամանակավոր կատարող, փ/ծ կապիտան Տիգրան Վարդանյան.

2) վերլուծության նախապատրաստման խումբ՝

ա) խմբի ղեկավար՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի (այսուհետ՝ ՃԿԿ) պետ, փ/ծ փոխգնդապետ Սուրեն Գալստյան.

բ) խմբի անդամներ՝

ա. ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ ՃԿԿ օպերատիվ հերթապահ հերթափոխի (այսուհետ՝ ՕՀՀ) ավագ հրահանգիչ, փ/ծ կապիտան Հրաչուհի Մարկոսյան.

3) միջնորդական խումբ՝

ա) խմբի ղեկավար՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ ՃԿԿ ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Գագիկ Եփրեմյան.

բ) խմբի անդամներ՝

ա. ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ ՃԿԿ ՕՀՀ ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Հռիփսիմե Հովակիմյան.

բ. ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ Մասիսի ՀՓՋ հրամանատար, փ/ծ փոխգնդապետ Բագրատ Դանիելյան.

գ. ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ Արարատի ՀՓՋ հրամանատարի տեղակալ, փ/ծ մայոր Արսեն Բաբագուլյան:

4. ՈՒսումնավարժությանը ներգրավել՝

1) տարահանման հանձնաժողովին.

2) քաղաքացիական պաշտպանության ծառայություններին.

3) Արարատի մարզային փրկարարական վարչությանը.

4) Արարատ համայնքի ղեկավար կազմին և Երասխ, Արմաշ, Պ.Սևակ, Զանգակատուն բնակավայրերի վարչական ղեկավարներին:

5. ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, փ/ծ փոխգնդապետ Արսեն Ղուկասյանին՝

1) ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2023 թվականի սեպտեմբերի 11-ը ներկայացնել հաստատման.

2) ապահովել համագործակցությունը ուսումնավարժության մասնակիցների հետ ուսումնավարժության անցկացման հարցերով.

3) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավված պաշտոնատար անձանց նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի.

4) ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին զեկուցել սեպտեմբերի 15-ին:

6. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան պլանները (մարզի քաղաքացիական պաշտպանության, ՔՊ ծառայությունների և համանքի ՔՊ պլանները):

2) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին.

3) ուսումնասիրել «**Քաղաքացիական պաշտպանության մասին**» ՀՀ օրենքը:

7.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Արարատի մարզպետին:

8. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:

Восстановимая подпись

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 **Ս. ԹԵՎՈՆՅԱՆ**